ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 3/1

«14» սեպտեմբերի 2022 թվականի գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդագյուլյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝

Տեղ համայնքի ավագանու թվով 9 (ինը) անդամներ՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Միքայելյան Աննա Միքայելի
5. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
6. Դալլաքյան Արման Յուրիկի
7. Առաքելյան Վահե Վարդանի
8. Դանիելյան Սևադա Վիտալիկի
9. Բաղդասարյան Կարեն Լորիկի

Բացակայում է Տեղ համայնքի ավագանու թվով 6 (վեց) անդամներ՝ Արագած Ղուկասյանը, Գևորգ Մարտիրոսյանը, Արգամ Հովսեփյանը, Հայրապետ Հայրապետյանը, Ասպետ Գալստյանը և Մասիս Զեյնալյանը:

որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդագյուլյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 9 (ինը)** անդամները:

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝

Քարաշենի վարչական ղեկավար Հակոբ Հակոբյանը, աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 64-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 14-ի 3-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:**
2. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 56-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**
3. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Խաչիկ Սոսիկի Մարտիրոսյանին օտարելու մասին:**
4. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի հիմնադրած Տեղ համայնքի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին:**
5. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երրորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 9 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու (այսուհետ՝ Ավագանի) կանոնակարգի 88-րդ և 89-րդ կետերի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմը՝
   1) Վահե Առաքելյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
   2) Գևորգ Մարտիրոսյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

3) Ասպետ Գալստյան - «Ապրելու երկիր» խմբակցություն,
4) Կարեն Բաղդասարյան - «Ապրելու երկիր» խմբակցություն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 9 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 56-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 315503,3 հազ. դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 331897,7 հազ. դրամ» բառերով:
   2) Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «դեֆիցիտը (պակասուրդը)՝ 77481,6 հազ. դրամ» բառերը փոխարինել «դեֆիցիտը (պակասուրդը)՝ 93876,03 հազ. դրամ» բառերով:
   3) Որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի նախատեսված հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 9 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԽԱՉԻԿ ՍՈՍԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Խաչիկ Սոսիկի Մարտիրոսյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող, ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք,գյուղ Խոզնավար 1-ին փողոց թիվ 26 հասցեում գտնվող 63,4 քմ ընդհանուր մակերեսով շինության (բնակելի տան) և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,12941 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-046-0007-0009, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 31082022-09-0029 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Խաչիկ Սոսիկի Մարտիրոսյանին (նույնականացման քարտ 003470135 տրված 15.03.2014թ. 032–ի կողմից)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ կետի ա) ենթակետով, 33.2-րդ կետով, 35-րդ կետի ա) ենթակետով սահմանված գներով.

    1) Բնակելի տան համար՝ 30000 դրամ x 0,0456 x 63,4 քմ = 86732 /ութանասունվեց հազար յոթ հարյուր երեսուներկու / ՀՀ դրամ,
    2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար՝ 92,4 դրամ x 1000,0 քմ + 3 x 92,4 դրամ x 294,1 քմ = 173925 /հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ:
    3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 9 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐԱԾ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով, Տեղ համայնքի զարգացման հիմնադրամի կանոնադրության 4.2-րդ և 4.3-րդ կետերով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի հիմնադրած Տեղ համայնքի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը՝

    1) Դավիթ Ղուլունց - Տեղ համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ.
    2) Արամ Միրզոյան - Տեղ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, խորհրդի անդամ.
    3) Լորա Սիմոնյան - Տեղ համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ.
    4) Արագած Ղուկասյան- Տեղ համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ.

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 9 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երրորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի հոկտեմբերի 14-ը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 9 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 14.40-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

_____Դավիթ Ղուլունց
_____Արամ Միրզոյան
_____Նազիկ Բաղդասարյան
_____Աննա Միքայելյան
_____Լորա Սիմոնյան
_____Արման Դալլաքյան
_____Վահե Առաքելյան
_____Սևադա Դանիելյան
_____Կարեն Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՏԱԿ ԲԱՂԴԱԳՅՈՒԼՅԱՆ